ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ կամաւորաց և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 25 սեպտեմբերի, թ. 1615։

Կոնդակ Աղէքսանդրապօլի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով, որով հաստատուեց նորա որոշումը՝ Ս. Փրկիչ եկեղեցու զուգընթաց դասարանը գաղթական մանուկների համար դպրոցի վերածելու առթիւ, օրհնելով Յանձնաժողովի անդամներին և նախաձեռնողներին։ 28 սեպտեմբերի, թ. 1617։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ֆիլադելֆիայից Ներսէս Մ. Մխալեանի յօգուտ կամաւորաց փոխադրած 495 ռուբ. 54 կոպ., պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 սեպտեմբերի, թ. 1632։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ Հնչեշտ գիւղի Տ. Յովհաննէս քահանայ Աբրահամեանի անունով, որով, համաձայն Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի գրաւոր միջնորդութեան, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 17 օգոստոսի, թ. 1366։

Կոնդակ Վաղարշապատի Վահան քահանայ Աղաջադեանի անունով, որով քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 29 սեպտեմբերի, թ. 1633։